

**ԱՐՏԱԿ ՌՈՒԴԻԿԻ ԲԱԼԱՅԱՆ**  
**«Արցախբանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն-Վարչության Նախագահ**

Ծնվել է 1976թ.-ի հունիսի 30-ին՝ ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում:

1993-1994թթ. ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակում:

1998թ.-ին գերազանցությամբ ավարտել է Արցախի պետական համալսարանը՝ ֆինանսներ և վարկ մասնագիտությամբ՝ հետագայում ուսումը շարունակելով նաև Արցախի պետական համալսարանի ասպիրանտուրայում:

1998-2007թթ. աշխատել է «Արցախբանկ» ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, այդ թվում՝ 2003թ. ապրիլից՝ Ներքին աուդիտի, վերահսկողության և վերլուծության գլխավոր դեպարտամենտի տնօրենի, 2004թ. օգոստոսից՝ Ակտիվների և պասիվների կառավարման գծով «Արցախբանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալի, Վարչության անդամի:

2007թ.-ի հոկտեմբերից մինչև 2015թ. հուլիսը զբաղեցրել է ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի պաշտոնը:

2015թ.-ի հուլիսից մինչև 2017թ.-ի հունիսի 5-ը աշխատել է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում՝ որպես ԼՂՀ Նախագահի խորհրդական-տնտեսագիտական վարչության պետ:

2017թ.-ի հունիսի 8-ից «Արցախբանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն-Վարչության նախագահն է:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

**ՎԱՀՐԱՍ ԲՈՐԻՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**  
**«Արցախբանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն-Վարչության Նախագահի տեղակալ,**  
**Վարչության անդամ**

Ծնվել է 1967թ.-ի մայիսի 1-ին՝ ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում:

1984-1988թթ. սովորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Ժողովրդական տնտեսության պլանավորում» ֆակուլտետում՝ ավարտին ստանալով տնտեսագետի որակավորում: 1991-1994թթ. սովորել և ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ասպիրանտուրայի հեռակա բաժինը՝ «Էկոնոմիկա, պլանավորում և ժողովրդական տնտեսության ու նրա ճյուղերի կառավարման կազմակերպում» մասնագիտությամբ:

1988թ. աշխատանքի է ընդունվել ԼՂԻՄ մարզգործկոմի պլանային հանձնաժողովում՝ որպես տնտեսագետ:

1989-1991թթ. աշխատել է ԼՂԻՄ Գլխավոր պլանային-տնտեսագիտական վարչությունում՝ որպես գլխավոր տնտեսագետ:

1992-1995թթ. աշխատել է ԼՂՀ Գերագույն խորհրդի տնտեսական, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում՝ որպես փորձագետ:

1995-1997թթ. աշխատել է որպես ԼՂՀ կառավարության Բարեփոխումների բաժնի գլխավոր մասնագետ:

1997-2004թթ.աշխատել է ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ որպես նախարարի տեղակալ, այնուհետև՝ 2004-2007թթ.՝ որպես ԼՂՀ գյուղատնտեսության նախարար:

2007թ. հոկտեմբերից մինչև 2008թ. մայիսը ղեկավարել է «Միջազգային բիզնես-կենտրոն» ՓԲ ընկերությունը:

2008թ. մայիսից մինչև 2010թ. հունիսը զբաղեցրել է ԼՂՀ Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի պաշտոնը:

2010թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին զբաղեցրել է ԼՂՀ Կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման վարչության պետի պաշտոնը:

2010թ. սեպտեմբերից մինչև 2013թ. օգոստոսը ղեկավարել է ԼՂՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը:

Իր աշխատանքային գործունեությունը «Արցախանկ» ՓԲԸ-ում սկսել է 2013թ. դեկտեմբերի 23-ից՝ որպես Բանկի Վարչության Նախագահի խորհրդական: 2014թ. օգոստոսի 1-ից հանդիսանում «Արցախբանկ» ՓԲԸ Վարչության անդամ: 2015թ. փետրվարի 23-ին Բանկի Խորհրդի որոշմամբ նշանակվել է «Արցախանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի տեղակալ:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

## **ԼԵՎՈՆ ԱՇՈՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

### **«Արցախբանկ» ՓԲԸ Զարգացման գծով տնօրեն - Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ**

Ծնվել է 1986թ.-ի հուլիսի 6-ին ՀՀ Երևան քաղաքում:

2002-2006թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում՝ «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2008թ.-ին գերազանցությամբ ավարտել է ՀՀ ԳԱԱ մագիստրատուրան՝ կառավարում մասնագիտությամբ: 2007թ. ընդունվել է ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքի Քաղաքացիական ծառայության հյուսիս-արևմտյան ակադեմիան՝ անձնակազմի կառավարում մասնագիտացմամբ, որը

գերազանցությամբ ավարտել է 2008թ.: 2008-2010թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ տնտեսություն, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ: Մասնակցել է բազմաթիվ դասընթացների և վերապատրաստումների:

2011թ. փետրվարին շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2015թ.-ին ուսանել է ԱՄՆ Բոստոն քաղաքի «Թաֆթս» համալսարանի «Ֆլեթչեր»-ի իրավունքի և դիվանագիտության դպրոցում՝ «Հանրային քաղաքականություն և հանրային կառավարում» մասնագիտությամբ:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 2007թ.-ին ՀՀ Ազգային ժողովում՝ զբաղեցնելով Նախագահի օգնականի, իսկ 2012թ.՝ Նախագահի խորհրդականի պաշտոնները:

2011-2014թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ որպես գիտաշխատող:

2013թ.-ի մարտից մինչև 2017թ.-ի հոկտեմբեր զբաղեցրել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի խորհրդականի պաշտոնը:

2017թ. հոկտեմբերի 20-ին «Արցախբանկ» ՓԲԸ խորհրդի որոշմամբ նշանակվել է «Արցախբանկ» ՓԲԸ Զարգացման գծով տնօրեն - Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ:

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:

### **ՊԱՐՈՒՅՐ ՀԱՄԼԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ** **Գլխավոր գանձապետ, Վարչության անդամ**

Ծնվել է 1973թ.-ի մարտի 5-ին՝ ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում:

1994-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը: 1995թ.-ի փետրվարից աշխատում է բանկային համակարգում:

Մինչև 2007թ.-ի դեկտեմբեր ամիսը զբաղեցրել է «Արցախբանկ» ՓԲԸ Միջբանկային հարաբերությունների և դիվինգի գործառնությունների դեպարտամենտի տնօրենի պաշտոնը: 2008թ.-ի հունվարից մինչև 2014թ.-ի հոկտեմբեր ամիսը զբաղեցրել է «Արցախբանկ» ՓԲԸ Ներդրումային և վարկավորման գլխավոր դեպարտամենտի տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը: 2014թ.-ի հոկտեմբերի 1-ից զբաղեցրել է «Արցախբանկ» ՓԲԸ Գանձապետի պաշտոնը, իսկ 2017թ. հոկտեմբերի 1-ից՝ Բանկի Գլխավոր գանձապետի պաշտոնը: «Արցախբանկ» ՓԲԸ Վարչության անդամ է հանդիսանում 2007թ. ապրիլի 3-ից:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

**ՌՈՒՉԱՆ ՎԱԼԵՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
**Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ**

Ծնվել է 1971թ.-ի դեկտեմբերի 30-ին՝ ՀՀ Երևան քաղաքում:

1994թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսահաշվային ֆակուլտետը՝ տնտեսագետի որակավորմամբ:

1994թ.-ի հունիսից մինչև 1994թ.-ի սեպտեմբեր ամիսը աշխատել է Վիճպետվարչության ամփոփ աշխատանքների և վերլուծությունների բաժնում՝ որպես մասնագետ:

1994թ.-ի սեպտեմբերից մինչև 2002թ.-ի նոյեմբեր ամիսը աշխատել է «Արդշինբանկ» ԲԲԸ-ում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոնները:

2002թ.-ի դեկտեմբերից մինչև 2013թ.-ի նոյեմբեր ամիսը «Հայինվեստբանկ» ՓԲԸ-ում (25.08.2006թ.-ից վերանվանվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ) զբաղեցրել է Գլխավոր հաշվապահի պաշտոնը:

2013թ.-ի նոյեմբերի 27-ին աշխատանքի է ընդունվել «Արցախբանկ» ՓԲԸ-ում և մինչև 2014թ.-ի փետրվարի 26-ը աշխատել է որպես Ներքին աուդիտի անդամի ժամանակավոր պաշտոնակատար:

2014թ.-ի փետրվարի 27-ից առ այսօր զբաղեցնում է «Արցախբանկ» ՓԲԸ Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամի պաշտոնը: